ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2024 թվականի N 956 - Ն

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ ՆՎԵՐՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՇՈՒՏ ՓՉԱՑՈՂ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԷԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ ՊԱՀԱՆՋՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ՑԱՆԿԸ, ՇՈՒՏ ՓՉԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 25.1-ին հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել՝

1) հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ պետական սեփականություն դարձած նվերների տնօրինման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) գույքի տնօրինման եղանակների ընտրության մեթոդաբանությունը, առանձին տեսակի գույքի տնօրինման առանձնահատկությունները սահմանելու և գույքի տնօրինման եղանակի վերաբերյալ «Պետական արարողակարգի մասին»

օրենքով սահմանված եզրակացության տրամադրման վերաբերյալ կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ պետական սեփականություն դարձած՝ շուտ փչացող նվերների ոչնչացման դեպքերը, կարգը և տնօրինման եղանակները սահմանելու մասին կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) շուտ փչացող և պահպանման էական ծախսեր պահանջող գույքերի ցանկը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման իմաստով՝ նվեր են համարվում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին՝

1) «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները, որոնց արժեքը գերազանցում է 60 հազ. դրամը և, որոնք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով հանձնվել են պետությանը.

2) «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով պետությանը հանձնված նվերը:

3. Սահմանել, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ սույն որոշման 2-րդ կետով սահմանված, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով հանձնված և պետական սեփակա-նություն դարձած նվերները (այսուհետ՝ գույք) տնօրինվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական գույքի կառավարման լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակա-ռուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) կողմից:

4. Սահմանել, որ սույն որոշման իմաստով գույքի տնօրինման եղանակի և սույն որոշման N 1 հավելվածով սահմանված այլ հարցերի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն տրամադրող մարմիններ (այսուհետ՝ լիազոր մարմին) են համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N 1681-Ն որոշման 2-րդ կետով սահմանված մարմինները՝ ըստ ապրանքների արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում (ԱՏԳ ԱԱ) դասակարգման:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

24.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ